ՋԱՀԻՋ

ՀԱՑԱՑՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ԱԼ-ՏԱԲԱՍՍՈՒՐ ԲԻ-Լ-ՏԻՋԱՐԱ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Կես մսխալ – Քանի որ Իրաքում մեկ մսխալը հավասար էր 4. 46 գրամի. հետևաբար խոսքը 2, 23 գրամանոց մարգարտի մասին է: Սակայն տարբեր երկրներում մսխալը մի փոքր տարբեր է: (*Хинц, Меры и веса, стр. 15*).*

[2] *Հազար մսխալ – 4 կիլոգրամ 460 գրամ:*

[3] *Երկու մսխալ – 8, 92 գրամ:*

[4] *Երեք մսխալ – 13, 36 գրամ:*

[5] *Ռույան – Իրանի կասպիական ծովափը և Մազանդարանի արևմտյան մասը ընդգրկող մի շրջան: (Ruyan, V. Minorsky, EOI, CD-ROM, (VIII: 660b)):*

[6] *Ամուլ – երկու քաղաք կա այս նույն անունով. մեկը գտնվում է Մազանդարանի հարավ-արևմտյան անկյունում, Կասպից ծովից 12 մղոն հարավ: Իսկ մյուսը գտնվում է Միջին Ասիայում, Ամու Դարիա գետի ձախ ափից երեք մղոն հեռավորության վրա (ներկայիս Թուրքմենստան): Հավանաբար այստեղ խոսքը առաջին Ամուլի մասին է: (Amul, L. Lockhart, M. Streck, EOI, CD-ROM, (I: 469a)):*

[7] *Կումիս – Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 220:*

[8] *Գոր (Ջուր) – Գորը, կամ Ջուրը, հետազայի Ֆիրուզաբազն է, որ նշանակում է Հազթանակի քաղաք: Ըստ ավանդության, այն կառուցել է Արտաշիր Պապականը ի նշան իր հաղթանակի՝ Արտավանի դեմ: Գորը գտնվում է Իրանի Ֆարս նահանգում: (Firuzabad, L. Lockhart, EOI, CD-ROM, (II: 926b)):*

[9] *Հուլուան – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 207:*

[10] *Շապուհ (Սարուր) արքան – Տե՛ս Յակուբի (պ.), ծնթգր. 23:*